



ՕՏԱՐՆԵՐԸ ՀԱՅԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

ԷՏՈՒՐՆ Ս. ՍՄԻՐ

ԻՄ ԱՅՅՍ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

ձառ՝ կարդացված Հայաստանի Բանկինգեթուդ տարեդարձին առթիվ,
Մանհարթն. Սևեթրի մեջ, Նյու-Յորք, դեկտեմբեր 9, 1945 թ.



նցյալ ամառ բախտ ունեցա մեկ շաբաթ մնալու Սովետ Հայաստանի մեջ: Հուզիչ փորձառություն մըն էր: Կակնկալի, որ Հայաստան, որպես հանրապետություն մը Սովետ Միության, բաժնեկից ըլլար մյուս Սովետ հանրապետությանց հետ տնտեսական և մշակութային այն մեծ հառաչողի մտայնաց, որոնք ի գուլս հանված են Հոկտեմբերյան Հեղափոխութենեն ի վեր: Ես ի մտի ունեի նաև հայ ժողովրդի անագորույն հալածանաց կենդանի հիշողությունները, որոնք արատաւորած են ժամանակակից պատմության էջերը: «Սովամահ հայերը» ասացուցցը իմ մտքիս մեջ էր: Գիտեի, թե հայերը ճնշված և կոտորված էին թուրք տիրապետողներու կողմէ: Գիտեի նաև, որ Հայաստանի շահերը բազում եղերական պարագաներու մեջ մատնրված էին եմրոպական ազգերեն, որոնք որպես բարեկամներ դիրքավորված էին: Երբ Երևան մեկնեցա, լիովին կակնկալի ժողովուրդ մը գտնել, որ իր նախկին տնտեսական տագնապին դուրս գալով՝ հառաչողի մած էր, բայց պիտի հայտնաբերեր իր կենցաղին մեջ և կյանքի նկատմամբ անոր ունեցած դիրքեն ան սպինները, զորս անարդարությունը և ճնշումը դրոշմած էին անոր վրա՝ բազում սերունդներու միջոցով:

Քնականաբար, իմ բերկրությունս մեծ եղավ, երբ երկաթուղիով կայարանեն դեպի պանդոկս փոխադրված պահուն ականատես եղա ամբողջովին արդիական քաղաքի մը, որուն բնակիչները լավ կերպով զգեստավորված՝ իրենց գործերը կհետապնդեին

անդրրազիտ երևութով և վատահուստությամբ: Սովամահության փոխարեն տեսա առողջություն և կենսունակություն, վատության փոխարեն ականատես եղա՝ խանդավառության և ցնծության:

Մինչ օրերը կսահեիք, հայ ժողովրդին և անոր սիրագործություններին իմ կրած գոհունակությունս աճեցավ:

Հայկական կյանքը լի է պաշտպանիչ այլազանությամբ: Գոտա, որ կարող էի հայ երաժշտական կատակերգության («Աշուղ Մուրադ») մը հանդիսատես ըլլալ երեկո մը, և մյուս առավոտուն մխրձվիլ Հայաստանի մշակութային մեծ անցյալին մեջ, զոր ձեռագիրներու Մատենադարանը կներկայացնէ: Այս Մատենադարանը գոյություն ունեցած է 200 տարիներ ի վեր: Ունի մոտավորապես 10.000 լիակատար ձեռագրեր, որոնք թվագրված են այն ժամանակաշրջանին, երբ Հայաստան բժշկության և մաթեմատիկայի, ինչպես նաև ուրիշ նյութերու հետազոտությանց մեջ համաշխարհային առաջնորդ մը կհանդիսանար: Դարձյալ որպես հայկական կենցաղի լուսաբանող հակադրություն և ճոխություն, այցեկեցի էջմիածնի մեծ եկեղեցին, որ շինված է 4-րդ դարուն մեջ և ուր կգտնվի կաթողիկոսի գահուլքը: Ես ականատես եղա հնախոսական կարևոր պեղումներու Ուրարտուի հեթանոսական ամրոցին մեջ, որ սկիզբ կառնու Քրիստոս յոթն դար առաջ, և անցուցի հաճեի ժամ մը հինգ հարկանի գետնահարկի մը լիովին արդիական հայկական գինիի մենակալության մեջ, ճաշակելով քոնյակը և

ժադերան, որոնք երկու սերունդներն է վեր կհասունանային:

Հայաստան ունի մոտավորապես մեկ ու կես միլիոն բնակչություն, որմե շուրջ քառորդ միլիոնը կբնակի Երևանի մեջ, — արդարև փոքր երկիր մըն է, և սակայն մեծ երկիր մը իր ընկերային իրագործություններով և ապագայի տեսիլքով: Զարմացա, որ Երևանի գլխավոր գրադարանն ունի 2 միլիոն գիրք և 25.000 երգագրություններ իր նվազի բաժնին մեջ: Մանկանց գրադարանը, որ անշատ հաստատություն մըն է, կպարունակեն 40.000 հատոր: Ամբողջ երկրին մեջ կան 1.500 գրադարան և ընթերցարան, միջին հաշվով մեկ գրատուն ամեն մեկ հազար անհատի համար: Ասիկա իսկապես սքանչելի երևույթ մըն է ժողովրդի մը համար, որուն գրադարանական գրությունը 1922-ին ծագում առած է Երևանի մեջ 40 հազար հատորներով, որոնք նվիրված են Թբիլիսիի Հայկական Բարեգործական Ընկերությունն և այլևայլ անհատական աղբյուրներին:

Մասնավոր այց մը տվի Մանկանց գրադարանին: Ընթերցատան ձվածե մեծ սեղանին շուրջ խմբված էին ամեն հասակի երեխաներ: Մեկի քովին մյուսին անցա տեսնելու համար թե ինչ կկարդային: Առաջին մանուկը, զոր հարցաքննեցի, ծանրախոհ տասն և մի ամյա փոքրիկ օրիորդ մըն էր, անձկանոք կկարդար մեր սեփական «Աղբար Թովմասի տեակը» ոչ թե հայերենով՝ այլ ռուսերեն լեզվով: Գտա որ 12-են մինչև 14 տարեկան մյուս մանուկներն ալ կկարդային ռուսերեն այնպիսի գործեր, որպիսիք են Գոգոլի Նորավեպը և Շիլլերի Ավագակները: Պատանիներու այսքան լիակատար բնատնությունը ռուսերենի հետ, որ անոնց երկրորդ լեզուն է, պերճախոս ապացույց մըն է Հայաստանի կրթական գրության ճշտության: Առաջնորդող բանաստեղծներ և ուրիշ գրագետներ գրադարան կերթան կիրակի օրերը դասախոսություններ տալու համար մանուկներուն: Աշխատակիցներու խումբը պայիկներու պատմություններ կը գրուցի: Պատերազմի ընթացքին, Կարմիր Բանակի պաշտոնատարները կխոսեին հայ հերոսներու մասին: Միջանկյալ կերպով ըսեմ, թե հայ գրագետներու խումբը, որ կբաղկանա մոտավորապես 140 անձերե, կպարծի այն իրողություն համար, որ իրենց թիվին քառասուն անձեր ծառայած են ռազմաճակատի վրա:

Նախանձելի է Հայաստանի պատերազմական արձանագրությունը: Ութսուն հայեր

ջբանշան ստացած են որպես Սովետ Միության հերոսներ, և կային 70 հայ զորավարներ, որոնց կարգին նաև Բանակի զորագլուխ մը, Բաղրամյանը:

Ինչպես Սովետ Միության ամեն վարկ մեջ, գիտությունը մեծ դեր կխաղա Հայաստանի մեջ:

Հայկական Գիտությանց Կաճառը, իր բազում գիտական հաստատություններով, կարևոր գործեր կկատարե զանազան ապարեզներու մեջ: Ինձ ըսվեցավ տիեզերական ճառագայթներու մասին կատարված փորձարկությանց վերաբերմամբ, որ քանի մը տարիներն է վեր հառաջ կտարվի Արագած լեռան վրա: Գիտության Կաճառը կպանծա նոր աստղադիտարանի իր ուրվագծովը, որը ոչ միայն նկատելի հավելում մը պիտի ըլլա երկրի գիտական դեյուրությանց համար, այլ նաև ուշագրավորեն պիտի կառուցվածք մը:

Գիտության ընդհանրացումը կանոնավոր կերպով հառաջ կտարվի: Իմ այցելությանս նախընթաց վեց ամիսներուն մեջ պիտեականները ավարտած էին ավելի քան 90 դասախոսություններ գործարանային խումբերու, Կարմիր բանակայիններու և հավաքական անտեսներու համար: Հանրապետության զանազան շրջաններուն մեջ, ավաններու տեղային խորհուրդները երեմն կհամախմբեն ժողովուրդը լսելու համար գիտական դասախոսություններ: Գիտությանց մասին ասուլիսներ կտրվին մոտավորականներուն համար իրենց սեփական խմբատեղիներուն մեջ: Ասկե զատ հրապարակային դասախոսություններ կտրվին հաճախ նույն ինքն Ակադեմիին մեջ: Ամբողջ երկրի լրագիրները կանոնավորաբար կհրատարակեն հոդվածներ գիտությանց մասին:

Գիտական հառաջադիմությանց ժողովուրդը ծանոթացնելու տեղական ջանքը՝ թե՛ իր տեսական և թե՛ գործնական ճյուղերով կուտա կրթական կարևոր արդյունքներ: Գիտական իրողությունաց և սկզբանց ծանոթությունը կնպաստե երկրագործին և գործարանային աշխատավորին, որպեսզի լավագույնս կատարեն իրենց գործը: Գիտական զարգացման հետապնդումը կսրն ամբողջ բնակչության մտածողությունը և հարատևորեն կհիշեցնե, թե գիտության շքնորհիվ կարող է հառաջադիմականորեն տիրապետել իր նյութական շրջապատին հանուն իր բարիքին:

ատավորվեցա Երևանի մեջ գտնու-
 վական ժամանակակից գեղար-
 րվանդակալի ցուցադրության մը
 ճեսակցեցա և հաճելի քննարկու-
 լունեցա սովետական և ամերիկյան
 տի շուրջ՝ մեծ թվով հայ նկարիչ-
 անդակագործներու հետ:

ան գեղարվեստը բերկրալի է: Եր-
 գծագրությունը և ոճը շնորհալի և
 նմ: Երանգը բացառապես կենդանի
 անի այն գեղարվեստագետներու
 որոնք կատեղծագործեն հարավա-
 մը պայծառ օդին մեջ, որ կլողա
 արևալույսին մեջ: Հայկական ար-
 եջ կնշմարվի գծագրական մեծ
 լրուն և ոճի նրբություն, որոնք կը-
 նն Միջին Արևելքի գեղարվեստը:
 անի մեջ տեսա երկու օպերաներ՝
 Անուշը, որոնք հայկական բեմի
 ներն են, և երկուքն ալ կօգտա-
 արկական հին երգերն քաղված
 նյութերը: Ինչպես որ սովորու-
 ծ օպերաներուն մեջ, նյութերը
 են. մեկը՝ բախման մը պատմա-
 է ընդ մեջ պարսից և հայոց Մի-
 ց մեջ, մյուսը՝ գեղջիկուհի մը և
 պատմությունն է: Այս օպերաները
 ղն հարդարված են և շքեղորեն
 լեցնիկ օպերայի թատրոնին մեջ,
 սմոտները գիշերվան մը մեջ կիշ-
 փառ և ձյունակատար Արարատի
 ն, Հայաստանի բնական սրբարա-
 լծմ կկոթողանա թրքական սահ-
 ղուն հազարամեթր անդին:

գեմադրության առթիվ, ես նշա-
 ն մեծարվեցա մեծ անձնավորու-
 Հայկանուշ Դանիելյանի ներկա-
 որ Սովետ Միության ժողովրդա-
 ստագիտուհի մըն է, և թեև պաշ-
 քաշված է իր տկարության պատ-
 ականյն վերադարձած էր երգելու
 տիրողոսին դերը (Անուշից): Ի
 երթի ընթացքի մը մեջ որ ինձ
 Թինիի պետական ազարակին մեջ,
 Դանիելյանին, որ արտասանեց
 շարժ ճառ մը. ի մասին Սովետա-
 բարեկամության, որուն նմանը
 չի մացած չէի:

թատրոնը միջազգայնորին
 է, մասնավորապես Շեքսպիրի
 մադրության համար: 1942-ին,
 ն երբ գերմանները կձգնեին ճամ-
 կովկասի մեջեն, Երևանի մեջ բե-
 ն Համլետի մրցակցական ներ-
 թըր, դերասաններն մին անձ-

նավորած է Դանիացի իշխանը որպես գոր-
 ծոն անձնավորություն մը, և մյուսը՝ որպես
 կրավորական անձ մը, որ դեպքերու բերու-
 մով հոն տարված է:

Իմ ամենեն հետաքրքրական փորձառու-
 թյուններն մեկն եղավ Օրելլոյի անգերա-
 զանց բեմադրությունը, որուն մեջ հոյակապ
 դերասան մը, Ավետիք Ավետիսյան կանձ-
 նավորեր Յակոյի գերը: Վերջին վարագույ-
 րի իշած պահուն 30 կամ 40-ի շափ պատա-
 նիններ բեմին ճակատը խուժեցին, ողջունե-
 լու և ծափելու համար դերակատարները:
 Չկրցի շանդրադառնել որ Ամերիկայի մեջ
 այս տեսակ գեղուն հակաղեցուցություն մը
 պատանիներու կողմն սովորաբար վերա-
 պահված էր այնպիսի դերասաններու հա-
 մար, որպիսիք են Ֆրանք Սինադրա և
 Հարրի Ճեմս:

Հայաստան ունի 28 թատրոններ, որոնց
 շարքին մեջ է նաև Երևանի օպերայի թատ-
 րոնը: Կա նաև համերգային նվագախումբ
 մը, նագի նվագախումբ մը և լարային քառ-
 յակ մը, որ կնվագե 6 քաղաքներու մեջ, ինչ-
 պես նաև պարի անձնակազմ մը: Թատրոն-
 ներու դերասանական խումբեր կբեմադրեն
 թատերախաղեր հավաքական տնտեսությանց
 և գործարաններու մեջ: Ամեն ջանք ի գործ
 կղրվի՝ տալու համար մշակույթային լավա-
 գույն զբոսանք մը որ միշտ մատչելի է ամե-
 նուն համար: Վճռականորեն, Հայաստան
 քաղաքակիրթ երկիր մըն է:

Հայ ժողովուրդը, որուն հետ տեսնվեցա,
 մտացի և ձեռներեց էր և չի ոգևորությունը
 եռանդով և ծայրահեղորեն առատաձեռն:
 Պիտի շիկնեի հայտնելու այն բոլոր ազնիվ
 բաները, որոնք ինքնաբերու և բնական կեր-
 պով ինձ համար եղան որպես այցելու ամե-
 րիկացիի մը:

Հայոց խանդավառությունը Ամերիկայի
 ամերիկացիացի սովորությանց համար հույժ
 մեծ է: Անձկանոք կիրաբարքին մշակութապես
 և ուրիշ կերպերով ավելի սերտորեն կապվի
 մեզի հետ: Գիտեմ, որ մենք պիտի փոխա-
 դարձենք այս զգացումը: Ամերիկացիք՝ բա-
 զում տարիներու ընթացքին բարյացակամ
 եղած են հայոց նկատմամբ: Անցյալին մեջ
 այլասիրաբար տված ենք անոնց նյութական
 օգնություն: Այժմ, մեր տալիք ամենամեծ
 աջակցությունը պիտի ըլլա հասկընալ և
 գորավիզ կանգնիլ բոլոր աշխարհի հայոց
 արքար պահանջներուն՝ հանուն Հայկական
 հայրենիքի մը: Այսպիսի հայրենիք մը հնա-
 րավոր դարձնելու համար, կհավատամ, որ
 Սովետ Հայաստանի սահմանները պետք է
 ընդարձակվին, ընդգրկելու համար տիրա-

կանորեն հայկական երկրամասերը, որոնք այժմ կատականին թուրքիս, և որոնց մեջ հայեր դեռ ևս կապրին մշակույթային և տնտեսական հետամնացութեան պայմաններու մեջ: Հայկական հարցի այսպիսի լուծում

մը պետք է եռանդազին շատագու՛յժ ամերիկացիներու կողմէն, որպեսզի Միացյալ Ազգաց Կազմակերպութիւնը ի կատար ածեղայն:

(«Նոր օր» հունվ. 3 և 10 1946 թ.)

ՏՈՒՑՈՐ ԶԱՆՍԸՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՕՐԻՆԱԿ ԿՈՒՏԱ

Նյու-Յորքի Մետիսն Սթուեր Կարտընի մեջ. Սովետ-Ամերիկյան բարեկամութեան մեծ հանդեսին, ուր ներկա էին 21.000 հոգի, Սովետ Միութեան մեջ փոքր ազգերու հանդեպ Սովետական քաղաքականութեան արդունքները թվելով՝ Քենթրալըրիի ավագերեց Հյուլեթ ձանսըն ըսավ ի միջի այլոց հետեւեալը.—

«Որպես բրիտանացի մը բնականորեն անձկալից ըլլալով ուսումնասիրելու գովետական վերաբերմունքը իր բազմաթիւ ազգութեանց հանդեպ, այցելեցի Հայաստանի, Վրաստանի և Ուզպեքստանի երիտասարդ հանրապետութիւնները: Այս ժողովուրդները և երկիրները՝ առողջ ու առույգ զարգացման հմայիչ պատկեր մը կեներկայացնեն: Ազգային կյանքը-հարուստ, քունագեղ և հպարտ կծաղկի և կբողբոջի զարմանալի արագութեամբ մը:

Իր բնական հարստութեանց աղբյուրները լիովին օգտագործելով՝ օրինակի համար Հայաստանը՝ հարուստ և բարգաւաճ կղաւնա: Հողաշեն խրճիթներով և խորթուրթ փողոցներով 27.000 բնակիչներով քաղաք մը, ուր կյանքը դաժան էր և երեխաները ճանճերու նման կմեռնեին, մայրաքաղաք Երևանը կհառաջանա հոյակապ ծրագիրնե-

րով և հսկայական քայլերով դեպի կես միլիոն բնակչութեան նշանակետը:

Հայաստանի օպերան, Հայաստանի մանուկ նվագողները և Հայաստանի մանկական օրբեստրան ծափողույններու փոթորիկ մը պիտի բարձրացնեն Լոնդոնի կամ Նյու-Յորքի, Չիկագոյի կամ Պիտինկհեմի մեջ:

Կուզեի բաղձալ կրկին, տր Հիմալայան լեռներեն հարավ գտնվող ամեն քաղաք ըլլար այնքան շքեղ, առողջապահ և ճոխորեն ազգային՝ որքան անոնց հյուսիսային լանջերուն վրա գտնվող Տաշքենտն է, որուն բամպակի գործարանները սովորելի ոչինչ ունին Լենքըշայրեն կամ Միացյալ Նահանգներեն, և որուն բամպակի գիտական կեդրոնական կայանը նոր հրաշքեր կգործե բամպակի մշակման մեջ. քաղաք մը՝ ուր երեխաները կծաղկին, և ճանճերը, մծեղները կմեկնին իրենց ճարակած ախտերուն հետ միասին:

Սովետ Միութիւնը ռահվիրա է՝ ազգային փոքրամասնութեանց հետ վարվելու արվեստին մեջ: Անոր ձեռք բերած հաջողութիւնները արժանի են գովասանքի. անոր միթողները պետք է ուսումնասիրվին»:

(«Վրաբեր» թիվ 58 1945 թ.)

ՕՄԱՐ ՖԱՐՈՒԻՏԻ (Արարական մեծագույն գրագետ)

ԱՐԵՎՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՍՈՎԵՏ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Սովետ Հայաստանի բանաստեղծներեն Սարմեն իր հայրենիք քերթվածին մեջ կըսե. —«Մեծ Հոկտեմբերը մեր աննկուն ժողովուրդին տվավ հայրենիք մը»: Հայ ժողովուրդը թվով մեծ ժողովուրդ մը չէ և ոչ ալ Հայաստանը քարտեզի վրա ընդարձակ երկիր մը: Սակայն հայ ժողովուրդը դարերի ի վեր իր արյունոտ պատմութեան ընթացքին. թվով իրմե մեծ ժողովուրդներու դեմ պայքարելով, քալած է դեպի իր ազատութիւնը. անկախութիւնն ու ապահովութիւնը: Ահա թե ինչու հայ ժողովուրդն իրավունք ունի 1917-ի Հոկտեմբերը դիտելու իր պատմութեան վերջին և ամենափառապարտ ազա-

տութեան արտը: Ազգերու ազատութեան և անկախութեան իրավունքի անբաժանելիութեան մեջ երբեք նկատի չառնվել ազգի մը թվական մեծութիւնը կամ փոքրութիւնը, ինչպես նաև պայքարի մեջ ժողովուրդներու ցուցաբերած հերոսութիւնը չի չափվիր երբեք իրենց թվական մեծութեամբ կամ երկրի հողային տարածութեամբ:

Արեւատութիւն կմաղթեմ Սովետ Հայաստանին. Մեծ Հոկտեմբերի պարգևած բարիքները երբեք չպիտի խլվին անոր ձեռքեն: Ինչ որ Մեծ Հոկտեմբերը գրած է աշխարհի ճակատին, երբեք չպիտի ցնջվի:

(«Նոր ուղի» թիվ 2 1946 թ. Պեյրոպ)